ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ 1

Տարիքային խումբ՝ 6-10 տարեկան

Տարեկան՝ 34 շաբաթ

Շաբաթական՝ 2 հանդիպում (68 պարապմունք)

Հեղինակ՝ Ավագյան Անի

«ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿ»

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Արհեստների խաչմերուկ» խմբակը համարվում է արտադասարանական գործունեության տեսակներից մեկը: «Արհեստների խաչմերուկ» խմբակի պարապմունքները նպաստում են սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանն ու զարգացմանը, ալգորիթմական, ստեղծագործական մտածողության սերմանմանը, տարատեսակ արհեստների հմտությունների ձեռքերմանը և դասավանդման ընթացքում ստացած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը: «Արհեստների խաչմերուկ» ակումբը մեծացնում է սովորողի ճանաչողական մտահորիզոնը, հնարավորություն տալիս ստեղծել աշխատանքներ՝ ըստ թեմայի, գաղափարի, բառակապակցության, պատրաստել շինվածքներ՝ աշխատելով ինչպես բնօրինակով, այնպես էլ՝ երևակայական, թույլ տալիս մեկնաբանել, վերլուծել իր և ընկերների աշխատանքները:

Նպատակները

- **Ներկայացնել խմբակ հաճախող սաներին գեղարվեստի ճյուղերը, արհեստների տեսակները:**
- **Ձևավորել և զարգացնել սեր ու հետաքրքրություն ժողովրդական արվեստի, մշակույթի նկատմամբ:**
- **Նպաստել «Արհեստների խաչմերուկ» խմբակ հաճախող սաների գեղագիտական ճաշակի ձևավորմանն ու զարգացմանը:**

- **Արժևորել արհեստների, արվեստի դերն ու նշանակությունը կյանքում և կենցաղում:**
- **Մեծացնել սովորողի ճանաչողական մտահորիզոնը:**

Խնդիրները

- **Ստեղծել արվեստ ու արհեստ սիրող և վերջիններիս նկատմամբ մեծ հետաքրքրություն ունեցող միջավայր, որտեղ բարձր են գնահատվում հնարամտությունն ու ստեղծագործ, տարբերվող միտքը:**
- **Աշխատանքներ տանել արհեստի ամենատարբեր ճյուղերի ծանոթացմանը և գործնական աշխատանքների միջոցով ստացած գիտելիքների ամրապնդմանը:**
- **Ապահովել ինքնուրույն մտածող և ստեղծագործող միջավայր:**
- **Ուշադիր լինել աշխատանքային պրոցեսի ընթացքում սաներից յուրաքանչյուրի նկատմամբ, խմբակի մասնակիցներին ծանոթացնել անվտանգության տեխնիկայի կանոններին:**

Վերջնարդյունքերը

«Արհեստների խաչմերուկ» խմբակի անդամները կկարողանան՝

- **Փորձարկել տարբեր նյութեր հետաքրքիր աշխատանքներ ստանալու նպատակով: Ստեղծել պատկերներ, կոլաժներ, ծավալային աշխատանքներ տարբեր նյութերից, նաև՝ թափոններից (ստվարաթուղթ, պլաստիկ, խցաններ և այլն):**
- **Ստեղծել աշխատանքներ՝ ըստ թեմայի, գաղափարի, սկզբունքի, բառակապակցության:**
- **Պատրաստել 2D, 3D և 4D աշխատանքներ՝ աշխատելով ինչպես բնօրինակով, այնպես էլ՝ երևակայական:**
- **Որոշել ապլիկացիայի, խճանկարի, օրիգամիի տեխնիկայով պատրաստվող առարկաների համար համապատասխան նյութի ընտրությունը:**
- **Կատարել բնական նյութերի հավաքում, տեսակավորում, մաքրում, չորացում:**
- **Մշակել թուղթը՝ ծալում, հարթեցում, կտրում, գծանշում, ներկում, սոսնձում:**
- **Տիրապետել ապլիկացիայի տեսակներին, օրիգամիի պատրաստման ընթացքին, կկարդան վերջիններիս պայմանական նշանները:**
- **Կարգավորել, կոկիկ պահել և պահպանել աշխատանքային տարածքը:**
- **Նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար:**

- **Աշխատել թիմում և կատարելով աշխատանքի բաժանում՝ ստանալ թիմային աշխատանքներ:**
- **Մեկնաբանել և վերլուծել իր ու ընկերների աշխատանքները:**

ԾՐԱԳԻՐ 1

N	Բովանդակություն	Ժամաքանակ
1	**Ներածություն**	1
2	**Աշխատանք գեղանկարչական նյութերով** 2.1. Գեղանկարչության ժանրերը 2.2. Հայ մանրանկարչություն, զարդարվեստ, գլխագրեր	14
3	**Աշխատանք թղթով** 3.1. Օրիգամի 3.2. Ապլիկացիա 3.3. Չինական ապլիկացիա	12
4	**Աշխատանք ծեփամածիկով** 4.1. Հարթային պատկերների ստեղծում 4.2. Տարածական պատկերների ստեղծում	10
5	**Աշխատանք մանածագործական նյութերով** 5.1. Ինչպես պատրաստել տիկնիկ տարբեր նյութերից (ֆետր, ստվարաթուղթ, արհեստական բամբակ, մանրաթելեր, կտոր) 5.2. Ասեղնագործության տեսակներ 5.3. Հուլունքագործություն	8
6	**Ծավալային կոմպոզիցիաների ստացում**	12
7	**Խճանկարի տեխնիկա**	4
8	**Դեկուպաժ**	4
9	**Էթիկետ և վարվելակարգի կանոններ**	3
Ծրագրով նախատեսվում է ամփոփիչ ցուցահանդես տարեկան 2 անգամ		

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ 2

Տարիքային խումբ՝ 11-15 տարեկան

Տարեկան՝ 34 շաբաթ

Շաբաթական՝ 2 հանդիպում (68 պարապմունք)

Հեղինակ՝ Ավագյան Անի

«ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿ»

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Արհեստների խաչմերուկ» խմբակը համարվում է արտադասարանական գործունեության տեսակներից մեկը: «Արհեստների խաչմերուկ» խմբակի պարապմունքները նպաստում են սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանն ու զարգացմանը, տարրատեսակ արհեստների հմտությունների ձեռբերմանը և դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ամրապնդմանը: «Արհեստների խաչմերուկ» խմբակի անդամները կկարողանան ստեղծել աշխատանքներ՝ հայկական/ազգային ավանդական տարրերն ինտեգրելով համաշխարհային արվեստի ստեղծագործություններին:

Նպատակները

- Ներկայացնել խմբակ հաճախող սաներին արհեստի տեսակները, գեղարվեստի ճյուղերը (գեղանկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն, գրաֆիկա, դեկորատիվ-կիրառական արվեստ), դրանց զարգացման ուղիները, ենթատեսակները, ժանրերը և գոհարները ինչպես համաշխարհային արվեստում, այնպես էլ հայկական ազգային արվեստում:
- Ձևավորել և զարգացնել հայագիտական, հայանպաստ մտածելակերպ նոր ձևավորվող սերնդի մեջ:
- Նպաստել սաների հետագա մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտության ընտրությանը արվեստի կամ արհեստների ոլորտում՝ շնորհիվ խմբակի դասընթացների ընթացքում ձեռք բերած գիտելիքների և փորձի ամրապնդման:
- Արժևորել արհեստների, արվեստի դերն ու նշանակությունը կյանքում և կենցաղում:
- Մեծացնել սովորողի ճանաչողական մտահորիզոնը:

- **Խմբակի սաներին սովորեցնել արտահայտել իրենց մտքերն ու գաղափարները արհեստի և արվեստի լեզվով:**

Խնդիրները

- **Ստեղծել արվեստ ու արհեստ սիրող և վերջիններիս նկատմամբ մեծ հետաքրքրություն ունեցող միջավայր:**
- **Աշխատանքներ տանել հայկական արվեստի և մշակույթի վերհանմանն ու հանրաճանաչմանը դպրոցական տարիքի երեխաների մոտ:**
- **Զարգացնել գիտելիքը գործնականում կիրառելու հմտություններ:**
- **Ուշադիր լինել աշխատանքային պրոցեսի ընթացքում սաներից յուրաքանչյուրի նկատմամբ, խմբակի մասնակիցներին ծանոթացնել անվտանգ աշխատանքի կանոններին:**

Վերջնարդյունքերը

«Արհեստների խաչմերուկ» խմբակի անդամները կկարողանան՝

- **Պլանավորել կատարվող գործնական աշխատանքների ընթացքի հերթականությունը, կազմել տեխնոլոգիական քարտ:**
- **Արհեստի ամենատարբեր ճյուղերում (դիզայն, տիկնիկագործություն, հուլունքագործություն, ասեղնագործություն, սենդի գեղեցիկ մատուցում և այլն) կկարողանա կատարել գործնական աշխատանքներ:**
- **Աշխատանքի բաժանում անելով՝ խմբակի սանը կկարողանա ճիշտ բաշխել հանձնարարության համար նախատեսված ժամանակը, օպտիմալ կօգտագործի այն՝ ստանալով ցանկալի վերջնարդյունք:**
- **Ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել անվտանգության, հիգիենայի, անձնական տարածքի կանոնները:**
- **«Արհեստների խաչմերուկ» խմբակի անդամը կկարողանա կարևորել միջառարկայական կապերը (կկարողանա բացատրել՝ ինչ է աշխատանքը, աշխատանքային ռեսուրսը, աշխատավարձը, աշխատանքային հմտությունները):**
- **Տարբերակել գեղարվեստի ճյուղերի տեսակները, կիմանա դրանց ենթատեսակներն ու ժանրերը, ամենահայտնի օրինակները:**
- **Կունենա ընդհանուր տեղեկություններ ժողովրդական արհեստների մասին:**
- **Կտիրապետի գեղարվեստական դեկորատիվ արտադրանքի նախագծման սկզբունքին, դրանց ստեղծման համար տարվող աշխատանքներին և ընթացքին:**
- **Ընտրել և խմբավորել աշխատանքները, ստեղծել պորտֆոլիո:**

- **Բացատրել, թե ինչու են ընտրվել տվյալ աշխատանքները:**
- **Ներկայացնել կարծիք ինչպես իր ու ընկերների կատարած աշխատանքների, այնպես էլ հայազգի և օտար արվեստագետների ստեղծագործությունների մասին:**
- **Ցուցադրել ստեղծագործական մտածողություն և գեղարվեստական միտք, կատարողական վարպետություն և ինքնավստահություն:**

ԾՐԱԳԻՐ 2

N	Բովանդակություն	Ժամաքանակ
1	**Ներածություն**	1
2	**Գեղարվեստի ճյուղերը** 1.1. Գեղանկարչություն 1.1.1. Մանրանկարչություն 1.1.2. Զարդարվեստ 1.1.3. Գլխատառեր 2.2. Քանդակ 2.3. Ճարտարապետություն 2.4. Գրաֆիկա 2.4.1 Տպագիր գիրք 2.5. Դեկորատիվ-կիրառական արվեստ	16
3	**Տարածական արվեստ** 3.1. Դիզայն 3.1.1. Հարթային կոմպոզիցիաների ստեղծում տարբեր թեմաներով 3.1.2. Ծավալային կոմպոզիցիաների ստեղծում 3.2. Լուսանկարչություն	12
4	**Ժամանակային և տարածա-ժամանակային արվեստներ** 4.1. Երաժշտություն 4.2. Գրականություն 4.3. Կինո 4.4. Թատրոն 4.5. Պար	6
5	**Աշխատանք մանածագործական նյութերով** 5.1. Կտորե խաղալիքներ 5.2. Տիկնիկներ տարբեր նյութերից (ֆետր, ստվարաթուղթ, արհեստական բամբակ, մանրաթելեր, կտոր) 5.3. Ծիսական տիկնիկներ	10

6	**Աշխատանք թելերով և հուլունքով** 6.1. Ասեղնագործության տեսակներ 6.1.1. Ասեղնագործություն X-երով 6.2. Հուլունքագործություն	**10**
7	**Խճանկարի տեխնիկա**	**4**
8	**Դեկուպաժ**	**4**
9	**Սենդի գեղարվեստական մատուցում**	**2**
10	**Էթիկետ և վարվելակարգի կանոններ**	**3**
Ծրագրով նախատեսվում է ամփոփիչ ցուցահանդես տարեկան 2 անգամ		